# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » օգոստոսի 2024թ. N ՄՈ/377-Ա

ք. Արմավիր

### « ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ«ՆԵՐՍԻՍՅԱՆ»ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 2-ի N ՄՈ/373-Ա որոշումը, «Վաղարշապատի«Ներսիսյան»թիվ 6 հիմնական» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Վաղարշապատի«Ներսիսյան»թիվ 6 հիմնական» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Անահիտ Պետրոսյան (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

**Հավելված**

**Հայաստանի Հանրապետության**

**Արմավիրի մարզպետի**

**2024 թվականի** 09 ապրիլի **ի**

**N ՄՈ/** 377**-Ա որոշման**

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

**Անդամներ՝**

Ս.Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ս.Սաֆարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**

Սեդա Ենգիբարյան- «Վաղարշապատի«Ներսիսյան»թիվ 6 հիմնական» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

**Ընդունող՝**

Գայանե Բիլբուլյան- «Վաղարշապատի«Ներսիսյան»թիվ 6 հիմնական » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

05.08.2024

X

VERIFIED OCSP 05.08.2024 14:07:43 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023